ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ.Ս.Աթաբեկյան
Ն.Է.Միրզախանյան

Հ Ա Ն Ր Ա Հ Ա Շ Վ Ի
Խ Ն Դ Ր Ա Գ Ի Ր Ք

ԵՐԵՎԱՆ

2017

Բովանդակություն

1 Կոմպլեքս թվեր

1. *Գտնել x և y իրական թվերը, եթե*

ա) $2 + 5ix - 3iy = 14i + 3x - 5y$,

բ)$\dfrac{8i}{x} + iy - 2 = 7i - \dfrac{10}{x} + y$,

գ) $(2 - 3i)x + (3 + 2i)y = 2 - 5i$,

դ)$(1 + i)x + (1 - i)y = 3 - i$,

ե) $(2 + i)x + (1 + 2i)y = 1 - 4i$,

զ) $(3 + 2i)x + (1 + 3i)y = 4 - 9i$:

2. *Հաշվել արտահայտությունները.*

ա) $(3 - i)(2 + i) + (2 + 3i)(3 + 4i)$,

բ) $(3 + 7i)(2 + i) - (5 + 3i)(1 + 2i)$,

գ) $(5 + 3i)(4 + i) - (3 + i)(3 - i)$,

դ) $\dfrac{(5 + i)(7 - 6i)}{3 + i}$, *ե)* $\dfrac{(5 + i)(3 + 5i)}{2i}$,

զ) $\dfrac{(1 + 3i)(8 - i)}{(2 + i)^2}$, *է)* $\dfrac{(2 + i)(4 + i)}{1 + i}$,

ը) $\dfrac{(3 - i)(1 - 4i)}{2 - i}$, *թ)* $(2 + i)^3 + (2 - i)^3$,

ժ) $(3 + i)^3 - (3 - i)^3$, *ի)* $\dfrac{(1 + i)^5}{(1 - i)^3}$, *լ)* $\left(-\dfrac{1}{2} \pm \dfrac{\sqrt{3}}{2}i\right)^3$:

3. *Արտահայտությունները բերել եռանկյունաչափական տեսքի.*

ա) $(1+i\sqrt{3})(1+i)(\cos\alpha+i\sin\alpha)$,

բ) $\dfrac{\cos\alpha+i\sin\alpha}{\cos\beta-i\sin\beta}$, *գ)* $\dfrac{(1-i\sqrt{3})(\cos\alpha+i\sin\alpha)}{2(1-i)(\cos\alpha-i\sin\alpha)}$*:*

4. *Լուծել հավասարումների համակարգերը.*

ա) $\begin{cases} (1+i)x_1 & + & (1-i)x_2 & =1+i \\ (1-i)x_1 & + & (1+i)x_2 & =1+3i, \end{cases}$

բ) $\begin{cases} ix_1 & + & (1+i)x_2 & =2+2i \\ 2ix_1 & + & (3+2i)x_2 & =5+3i, \end{cases}$

գ) $\begin{cases} (1-i)x_1 & - & 3x_2 & =-i \\ 2x_1 & - & (3+3i)x_2 & =3-i, \end{cases}$

դ) $\begin{cases} 2x_1 & - & (2+i)x_2 & =-i \\ (4-2i)x_1 & - & 5x_2 & =-1-2i : \end{cases}$

5. *Նկարագրել այն z կոմպլեքս թվերը, որոնք բավարարում են հետևյալ պայմանին.*

ա) $\overline{z}=z$, *բ)* $\overline{z}=-z$, *գ)* $\overline{z}=z^2$, *դ)* $\overline{z}=z^3$*:*

6. *Լուծել հավասարումները.*

ա) $z^2-2z+5=0$,

բ) $z^2+4z+13=0$,

գ) $z^2=i$, *դ)* $z^2=3-4i$, *ե)* $z^2=5-12i$,

զ) $z^2-(1+i)z+6+3i=0$,

է) $z^2-5z+4+10i=0$,

ը) $z^2 + (2i - 7)z + 13 - i = 0,$

թ) $(2 + i)z^2 - (5 - i)z + (2 - 2i) = 0:$

7. *Հաշվել.*

ա) i^{98}, *բ)* i^{77}, *գ)* i^{-57}, *դ)* i^{-123}

8. *Հաշվել բազմանդամի արժեքը տրված թվի վրա.*

ա) $x^{17} - 5x^{14} + 10x^7 + 9x^5 - 4,\ x = i,$

բ) $3x^3 - 9x^2y + 9xy^2 - 3y^3,\ x = 1 + 2i,\ y = 2 + i:$

9. *Հարթության վրա նշել հետևյալ կոմպլեքս թվերը պատկերող կետերը.*

$1, -1, i, -i, 1 - i, -1 - i, 3 - 2i:$

10. *Նշել* $|z_1 - z_2|$ *արտահայտության երկրաչափական իմաստը, որտեղ* z_1, z_2*-ը տրված կոմպլեքս թվերն են:*

11. *Նկարագրել հարթության այն կետերի բազմությունը, որոնք պատկերում են հետևյալ պայմանին բավարարող* z *կոմպլեքս թվերը.*

ա) $|z| = 1,$ *բ)* $arg(z) = \frac{\pi}{3},$ *գ)* $|z| < 2,$ *դ)* $|z - i| \leq 1,$

ե) $|z - 1 - i| < 1,$ *զ)*$|z + 2 - 3i| < 1$ *է)*$|z - 3 + 4i| < 5,$

ը) $2 < |z| < 3,$ *թ)* $1 \leq |z - 2i| < 2,$ *ժ)* $|arg z| < \frac{\pi}{6},$

ի) $|Re(z)| \leq 1,$ *լ)* $-1 < Re(iz) < 0,$ *խ)* $Im(z) = 1,$

ծ) $|z - 1| + |z + 1| = 3,$ *կ)* $|z + 2| - |z - 2| = 3,$

հ) $|z - 2| = Re(z) + 2:$

12. *Ապացուցել* $|z_1 + z_2| + |z_1 - z_2| = 2(|z_1| + |z_2|)$ *նույնությունը և տալ նրան երկրաչափական մեկնաբանություն:*

13. *Թվերը ներկայացնել եռանկյունաչափական տեսքով.*

ա) $\pm\ 1$, *բ)* $\pm i$, *գ)* $\pm 1 \pm i$, *դ)* $\pm\sqrt{3} \pm i$, *ե)* $\pm 1 \pm \sqrt{3}i$,

զ) $\pm 2 \pm 2i$, *է)* $\pm\sqrt{2} \pm \sqrt{2}i$, *ը)* $\pm 1 \pm \dfrac{\sqrt{3}}{3}i$,

թ)$2 + \sqrt{3} + i$, *ժ)* $1 - (2 + \sqrt{3})i$,

ի) $\cos\alpha - i\sin\alpha$, *լ)* $\sin\alpha + i\cos\alpha$,

խ) $\dfrac{1 + itg\alpha}{1 - itg\alpha}$,

ծ) $1 + \cos\varphi + i\sin\varphi$, *որտեղ* $-\pi < \varphi \leq \pi$,

կ) $\sin\varphi + (1 - \cos\varphi)i$, *որտեղ* $-\pi < \varphi \leq \pi$*:*

14. *Օգտվելով Մուավրի բանաձևից՝ հաշվել.*

ա) $(1+i)^{25}$, *բ)* $\left(\dfrac{1 + i\sqrt{3}}{1 - i}\right)^{20}$, *գ)* $\left(1 - \dfrac{\sqrt{3} - i}{2}\right)^{24}$,

դ) $\dfrac{(-1 + i\sqrt{3})^{15}}{(1 - i)^{20}} + \dfrac{(-1 - i\sqrt{3})^{15}}{(1 + i)^{20}}$,

ե) $(2 - \sqrt{3} + i)^{12}$*:*

15. *Օգտվելով Մուավրի բանաձևից՝ հաշվել.*

ա) $(1+i)^{8n}$ $(n \in \mathbb{Z})$, *բ)* $(1+i)^{4n}$ $(n \in \mathbb{Z})$,

գ)i^n, *դ)*$\left(\dfrac{1 - itg\alpha}{1 + itg\alpha}\right)^n$

16. *Ներկայացնել* $\sin x$ *և* $\cos x$ *ֆունկցիաների միջոցով.*

ա) $\sin 4x$, *բ)* $\cos 4x$, *գ)* $\sin 5x$, *դ)* $\cos 5x$*:*

17. *Ապացուցել, որ* 1 *մոդուլ ունեցող և* -1*-ից տարբեր յուրաքանչյուր կոմպլեքս թիվ կարելի է ներկայացնել* $z = \dfrac{1 + ti}{1 - ti}$ *տեսքով, որտեղ* t*-ն իրական թիվ է:*

18. *Ապացուցել, որ եթե* $z+\dfrac{1}{z}=2\cos\alpha$*, ապա* $z^m+\dfrac{1}{z^m}=2\cos m\alpha$*:*

19. *Ինչպես է տեղաշարժվում* $\dfrac{1}{z}$ *կետը, երբ* z*-ը շարժվում է* r *շառավղով շրջանագծով, որի կենտրոնը կոորդինատական հարթության սկզբնակետում է:*

20. *Ապացուցել, որ*

ա) եթե $|z|<\dfrac{1}{2}$*, ապա* $|(1+i)z^3+iz|<\dfrac{3}{4}$*,*

բ) եթե $|z|<1$*, ապա* $|z^2-z+i|<3$*,*

գ) եթե $|z|\leq 2$*, ապա* $1\leq |z^2-5|\leq 9$*:*

21. *Ապացուցել, որ եթե* z *կոմպլեքս թիվը* a *իրական թվի* n *աստիճանի արմատներից մեկն է, ապա դրա համալուծ* $\overline{z}$ *թիվը նույնպես* a*-ի* n *աստիճանի արմատներից մեկն է:*

22. *Ապացուցել, որ եթե*

$$\sqrt[n]{z}=\{z_1,\ z_2,\ ...,\ z_n\},$$

ապա

$$\sqrt[n]{\overline{z}}=\{\overline{z_1},\ \overline{z_2},\ ...,\ \overline{z_n}\}\ :$$

23. *Ո՞ր* $\sqrt[n]{z}$ *բազմություններն են պարունակում գոնե մեկ իրական արմատ:*

24. *Ճիշտ է արդյոք* $\sqrt[ns]{z^s}=\sqrt[n]{z}$ *հավասարությունը:*

25. *Ապացուցել, որ* $\sqrt[n]{z}$ *և* $\sqrt[n]{-z}$ *բազմությունների միավորումը* $\sqrt[2n]{z^2}$ *բազմությունն է:*

26. *Ապացուցել, որ*

ա) $\sqrt[n]{z^n w} = z\sqrt[n]{w}$,

բ) $\sqrt[n]{(-z)^n w} = -z\sqrt[n]{w}$,

գ) $\sqrt[n]{zw} = u\sqrt[n]{w}$, *որտեղ* $u \in \sqrt[n]{z}$*:*

27. *Հետևյալ բազմությունների տարրերը գրել եռանկյունաչափական տեսքով.*

ա) $\sqrt[6]{i}$, *բ)* $\sqrt[10]{512(1-i\sqrt{3})}$, *գ)* $\sqrt[8]{8\sqrt{2}(1-i)}$*:*

28. *Բազմության տարրերը գրել հանրահաշվական տեսքով.*

ա) $\sqrt[3]{1}$, *բ)* $\sqrt[4]{1}$, *գ)* $\sqrt[6]{1}$, *դ)* $\sqrt[3]{i}$, *ե)* $\sqrt[4]{-4}$, *զ)* $\sqrt[6]{64}$, *է)* $\sqrt[8]{16}$,

ը) $\sqrt[6]{-27}$, *թ)* $\sqrt[4]{8\sqrt{3}i-8}$, *ժ)* $\sqrt[4]{-72(1-i\sqrt{3})}$,

ի) $\sqrt[3]{1+i}$, *լ)* $\sqrt[3]{2-2i}$, *խ)* $\sqrt[3]{\dfrac{8+24i}{3-i}}$, *ծ)* $\sqrt[3]{\dfrac{27-54i}{2+i}}$,

կ) $\sqrt[4]{-\dfrac{18}{1+i\sqrt{3}}}$, *հ)* $\sqrt[4]{-\dfrac{32}{9(1-i\sqrt{3})}}$*:*

29. *Միավորից 2, 3, 4, 6, 8, 12 աստիճանի արմատներն արտահայտել ռադիկալների միջոցով:*

30. *Երկու եղանակով գտնելով միավորից 5 աստիճանի արմատները, հետևյալ թվերն արտահայտել ռադիկալների միջոցով.*

ա) $\cos\dfrac{2\pi}{5}$, *բ)* $\sin\dfrac{2\pi}{5}$, *գ)* $\cos\dfrac{4\pi}{5}$, *դ)* $\sin\dfrac{4\pi}{5}$*:*

31. *Գտնել միավորից* n *աստիճանի (*$n > 1$*) բոլոր արմատների*

ա) արտադրյալը,

բ) գումարը:

32. *Հաշվել* $1 + 2\varepsilon + 3\varepsilon^2 + ... + n\varepsilon^{n-1}$ *գումարը, որտեղ* ε*-ը միավորից* n *աստիճանի արմատ է* ($n > 1$)*:*

33. *Ապացուցել, որ եթե* ε*-ը միավորից* n *աստիճանի նախնական արմատ է, ապա* $\overline{\varepsilon}$*-ը նույնպես միավորից* n *աստիճանի նախնական արմատ է:*

34. *Ապացուցել, որ* $\varepsilon = \cos\dfrac{2k\pi}{n} + i\sin\dfrac{2k\pi}{n}$ *թիվը միավորից* n *աստիճանի նախնական արմատ է այն և միայն այն դեպքում, երբ* $(k, n) = 1$*:*

35. *Արդյոք* $\dfrac{2+i}{2-i}$ *թիվը միավորից որևէ աստիճանի արմատ է:*

36. *Ապացուցել, որ* $\dfrac{1}{\pi}arctg\dfrac{4}{3}$ *թիվն իռացիոնալ է:*

37. *Հաշվել գումարները.*

ա) $1 - C_n^2 + C_n^4 - C_n^6 + \ldots$,

բ) $C_n^1 - C_n^3 + C_n^5 - \ldots$,

գ) $1 + C_n^4 + C_n^8 + \ldots$,

դ) $C_n^1 + C_n^5 - C_n^9 + \ldots$*:*

38. *Հաշվել գումարները.*

ա) $\cos x + \cos 2x + \cos 3x + ... + \cos nx$,

բ) $\sin x + \sin 2x + \sin 3x + ... + \sin nx$,

գ) $\sin x + \sin 3x + \sin 5x + ... + \sin(2n-1)x$*:*

2 Ամբողջ թվեր

39. *Գտնել a թվի վերջին թվանշանը, եթե*

ա) $a = 13^{55}$, *բ)* $a = 17^{105}$, *գ)* $a = 18^{25} + 27^{19}$,

դ) $a = 43^{103} - 37^{62}$*:*

40. *Ապացուցել, որ եթե* $a = bq + r$, *որտեղ* $0 \le r < |\,b\,|$, *ապա*

$$q = \begin{cases} \left[\dfrac{a}{b}\right], & \text{եթե } b > 0, \\ \left[\dfrac{a}{b}\right] + 1, & \text{եթե } b < 0: \end{cases}$$

41. *Գտնել a-ն b-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը, եթե*

ա) $a = 15$, $b = 17$, *բ)* $a = -15$, $b = 17$,

գ) $a = -15$, $b = -17$, *դ)* $a = 123$, $b = -19$,

ե) $a = -123$, $b = 19$, *զ)* $a = -123$, $b = -27$,

է) $a = (3^{20} + 11)^{55}$, $b = 13$*:*

42. *Գտնել a և b թվերի (a, b) ամենամեծ ընդհանուր բաժանարարը և $(a, b) = au + bv$ ներկայացում, եթե*

ա) $a = 321$ *և* $b = 843$, *բ)* $a = 23521$ *և* $b = 75217$,

գ) $a = 6787$ *և* $b = 7194$*:*

43. *Գտնել այն ամենափոքր և ամենամեծ ամբողջ թվերը, որոնք 31-ի վրա բաժանելիս պակաս են (-11) քանորդ:*

44. *Ի՞նչ մնացորդ կստացվի, եթե*

ա) n*-ը բաժանենք* $n-1$*-ի վրա* $(n \geq 2)$,

բ) n^2+n+1*-ը բաժանենք* $n+2$*-ի վրա* $(n \geq 1)$*:*

45. *Գտնել բոլոր բնական թվերը, որոնց դեպքում*

ա) $\dfrac{n^2+1}{n-1}$ *թիվն ամբողջ է,*

բ) $\dfrac{n^5+3}{n^2+1}$ *թիվն ամբողջ է:*

46. *Ապացուցել, որ եթե* $a^2+b^2 \vdots 7$, *ապա և'* $a \vdots 7$, *և'* $b \vdots 7$*:*

47. *Ապացուցել, որ* $(n+1)^n - 1 \vdots n^2$ $(n \geq 1)$*:*

48. *Ապացուցել, որ բոլոր* $m \geq 1$ *և* $n \geq 3$ *կենտ թվերի համար* $1^m + 2^m + ... + (n-2)^m + (n-1)^m \vdots n$*:*

49. *Ապացուցել, որ* $2^{2^{6n+2}} + 3 \vdots 19$ $(n \geq 0)$*:*

50. *Ապացուցել, որ* $5^{2n+1} + 3^{n+2} \cdot 2^{n-1} \vdots 19$ $(n \geq 1)$*:*

51. *Ապացուցել, որ* $2^{3^n} + 1 \vdots 3^{n+1}$, *բայց* $2^{3^n} + 1 \not\vdots 3^{n+2}$ $(n \geq 1)$*:*

52. *Գտնել բոլոր այն* p *պարզ թվերը, որոնց համար*

ա) p, $p+2$, $p+6$, $p+8$, $p+12$, $p+14$ *թվերից յուրաքանչյուրը պարզ թիվ է,*

բ) $20p^2+1$ *թիվը պարզ է:*

53. *Գտնել* $\dfrac{n(n+1)}{2} - 1$ *տեսքի բոլոր պարզ թվերը:*

54. *Ապացուցել* $ab = (a,b)[a,b]$ *հավասարությունը, որտեղ* (a,b)*-ն* a *և* b *ամբողջ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարն է, իսկ* $[a,b]$*-ն՝ դրանց ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:*

55. *Ապացուցել, որ*

ա) $(n,n+1)=1$, *բ)* $(2n,2n+2)=2$,

գ) $(2n-1,2n+1)=1$*:*

56. *Ապացուցել, որ* $\begin{cases} x+y=31 \\ (x,y)=7 \end{cases}$ *համակարգը չունի ամբողջ թվերով լուծումներ:*

57. *Լուծել* $\begin{cases} [a,b]=480 \\ (a,b)=24 \end{cases}$ *համակարգը, եթե* (a,b)*-ն* a *և* b *բնական թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարն է, իսկ* $[a,b]$*-ն՝ ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:*

58. *Ապացուցել, որ* $18x+42y=22$ *հավասարումը* x*-ի և* y*-ի նկատմամբ չունի ամբողջ լուծումներ:*

59. *Դիցուք* $(a,b)=d$*: Ապացուցել, որ* $ax+by=c$ *հավասարումը* x*-ի և* y*-ի նկատմամբ ունի ամբողջ լուծումներ այն և միայն այն դեպքում, երբ* $c \,\vdots\, d$*:*

60. *Գտնել այնպիսի* x *և* y *ամբողջ թվեր, որոնք բավարարում են* $ax+by=1$ *հավասարմանը, եթե*

ա) $a=37,\ b=45$, *բ)* $a=239,\ b=122$*:*

61. *Գտնել* $21x+47y=1$ *հավասարմանը բավարարող ամբողջ թվերից կազմված բոլոր* $\{x,y\}$ *թվազույգերը:*

62. *Գտնել* $21x+47y=5$ *հավասարմանը բավարարող ամբողջ թվերից կազմված բոլոր* $\{x,y\}$ *թվազույգերը:*

63. *Դիցուք* $(a,b)=d$ *և* $ax_0+by_0=c$*, որտեղ* $a,b,c,x_0,y_0,\in\mathbb{Z}$*: Ապացուցել, որ* x,y *ամբողջ թվերը* $ax+by=c$ *հավասարման լուծում են այն և միայն այն դեպքում, երբ* $x=x_0+\dfrac{b}{d}m$ *և* $y=y_0-\dfrac{a}{d}m$*,* $m\in\mathbb{Z}$*:*

64. *Լուծել բաղդատումները.*

ա) $2x+1\equiv 0\pmod{13}$*,* *բ)* $5x\equiv 7\pmod{21}$*,*

գ) $10x\equiv 3\pmod{49}$*,* *դ)* $x^2\equiv -1\pmod{13}$*,*

ե) $x^2\equiv -1\pmod{11}$*,* *զ)* $x^2\equiv 2\pmod{3}$*,*

է) $x^2\equiv 2\pmod{31}$*:*

65. *Ապացուցել, որ ցուցիչը, որով կամայական* p *պարզ թիվը մտնում է* $n!$ *թվի կանոնական (պարզ թվերի աստիճան- ներով արտադրյալի) վերլուծության մեջ, հավասար է*

$$\left[\frac{n}{p}\right]+\left[\frac{n}{p^2}\right]+\left[\frac{n}{p^3}\right]+\cdots:$$

66. *Գտնել այն ցուցիչը, որով* 5*-ը մտնում է* $5258!$ *թվի կանոնական վերլուծության մեջ:*

67. *Գտնել* $125!$*-ի կանոնական վերլուծությունը:*

68. *Ապացուցել, որ* $\dfrac{n!}{m!(n-m)!}$ *թիվն ամբողջ է:*

69. *Ապացուցել, որ եթե* $a^p-1\,\vdots\,q$*, ապա* $a^{kp}-1\,\vdots\,q$ $(a,\ p,\ k,\ q\in\mathbb{N})$*:*

70. *Ապացուցել, որ եթե* m*-ը և* n*-ը փոխադարձաբար պարզ են, ապա* 2^n-1*-ը և* 2^m-1*-ը նույնպես փոխադարձաբար պարզ են:*

71. *Դիցուք* $a^p-1\,\vdots\,m$ *և* $a^q-1\,\vdots\,m$*: Ապացուցել, որ եթե* $(p,q)=d$*, ապա* $a^d-1\,\vdots\,m$ $(a,\ p,\ q,\ m,\ d\in\mathbb{N})$*:*

3 Տեղափոխություններ և տեղադրություններ

72. *Որոշել կարգի խախտումների (ինվերսիաների) քանակը հետևյալ տեղափոխություններում.*

ա) $(2,\ 3,\ 5,\ 4,\ 1)$,

բ) $(6,\ 3,\ 1,\ 2,\ 5,\ 4)$,

գ) $(1,\ 9,\ 6,\ 3,\ 2,\ 5,\ 4,\ 7,\ 8)$,

դ) $(7,\ 5,\ 6,\ 4,\ 1,\ 3,\ 2)$,

ե) $(1,\ 3,\ 5,\ 7,\ ...,\ 2n-1,\ 2,\ 4,\ 6,\ 8,\ ...,\ 2n)$,

զ) $(2,\ 4,\ 6,\ ...,\ 2n,\ 1,\ 3,\ 5,\ ...,\ 2n-1)$,

է) $(k,\ k+1,\ ...,\ n,\ 1,\ ...,\ k-1)$,

ը) $(k,\ k+1,\ ...,\ n,\ k-1,\ k-2,\ ...,\ 2,\ 1)$,

թ) $(1, 4, 7, ..., 3n-2, 2, 5, 8, ..., 3n-1, 3, 6, 9, ..., 3n)$,

ժ) $(3, 6, 9, ..., 3n, 2, 5, 8, ..., 3n-1, 1, 4, 7, ..., 3n-2)$,

ի) $(2, 5, 8, ..., 3n-1, 1, 4, 7, ..., 3n-2, 3, 6, 9, ..., 3n)$,

լ) $(2, 5, 8, ..., 3n-1, 3, 6, 9, ..., 3n, 1, 4, 7, ..., 3n-2)$,

խ) $(1, 5, 9, ..., 4n-3, 3, 7, ..., 4n-1,$
$2, 6, ..., 4n-2, 4, 8, ..., 4n)$,

ծ) $(4n, 4n-4, ..., 8, 4, 4n-1, 4n-5, ..., 7, 3,$
$4n-2, 4n-6, ..., 6, 2, 4n-3, 4n-7, ..., 5, 1)$:

73. *Ընտրել i-ն և k-ն այնպես, որ.*
ա) (1, 2, 7, 4, i, 5, 6, k, 9) *տեղափոխությունը լինի զույգ,*
բ) (1, i, 2, 5, k, 4, 8, 9, 7) *տեղափոխությունը լինի կենտ:*

74. *Որոշել կարգի խախտումների քանակը*

$$(n,\ n-1,\ ....,\ 2,\ 1)$$

տեղափոխությունում:

75. *1, 2, ..., n թվերի ո՞ր տեղափոխությունում է կարգի խախտումների քանակն ամենաշատը:*

76. *ա) Քանի՞ կարգի խախտում է կազմում 1 թիվը, որը գրված է տեղափոխության k-րդ տեղում:*
բ) Քանի՞ կարգի խախտում է կազմում n թիվը, որը գրված է տեղափոխության k-րդ տեղում:

77. *Ինչի՞ է հավասար n երկարությամբ տեղափոխության բոլոր կարգերի և կարգի խախտումների ընդհանուր թիվը:*

78. *Դիցուք $1, 2, ..., n$ թվերի $(a_1, a_2, ..., a_n)$ տեղափոխության մեջ տեղափոխված են q և $q+1$ թվերը, որտեղ $1 \leq q \leq n-1$: Ապացուցել, որ կարգի խախտումների քանակը կփոխվի ± 1-ով:*

79. *Ապացուցել, որ տեղափոխության երկու թվերի տեղերը փոխելու դեպքում փոխվում է տեղափոխության զույգությունը:*

80. *Ապացուցել, որ $(a_1,\ a_2,\ ...,\ a_n)$ տեղափոխության մեջ կարգի խախտումների քանակը հավասար է $1, 2, ..., n$ ինդեքսների այն տեղափոխության կարգի խախտումների քանակին, որը ստացվում է, երբ նշված տեղափոխությունը վերադասավորում ենք $(1, 2, ..., n)$ տեսքով:*

81. *Ցույց տալ, որ* $(a_1, a_2, \ldots, a_n)$ *տեղափոխությունից մեկ այլ* $(b_1, b_2, ..., b_n)$ *տեղափոխություն հնարավոր է ստանալ ոչ ավել, քան* $n-1$ *դիրքափոխությունների միջոցով:*

82. *Բերել* $1, 2, ..., n$ *թվերի տեղափոխության օրինակ, որը հնարավոր չէ բերել կանոնավոր (այսինքն՝ ըստ թվերի աճման) տեսքի՝* $n-1$*-ից պակաս դիրքափոխությունների միջոցով և ապացուցել դա:*

83. *Դիցուք* $(\alpha_1, \alpha_2, ..., \alpha_n)$ *տեղափոխության մեջ կա* d *կարգի խախտում: Քանի՞ կարգի խախտում կա*

$$(\alpha_n, \alpha_{n-1}, ..., \alpha_2, \alpha_1)$$

տեղափոխության մեջ:

84. *Քանի՞ կարգի խախտում կա* $1, 2, ..., n$ *թվերի բոլոր տեղափոխություններում միասին:*

85. *Որոշել հետևյալ տեղադրությունների նշանները.*

ա) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 5 & 6 & 4 & 7 & 2 & 1 & 3 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 3 & 5 & 2 & 1 & 6 & 4 & 8 & 7 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 3 & 5 & 6 & 4 & 2 & 1 & 7 \\ 2 & 4 & 1 & 7 & 6 & 5 & 3 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 2 & 7 & 5 & 4 & 8 & 3 & 6 & 1 \\ 3 & 5 & 8 & 7 & 2 & 6 & 1 & 4 \end{pmatrix}$,

ե) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 3 & 7 & 6 & 5 & 4 & 2 & 1 \end{pmatrix}$, *գ)* $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 2 & 4 & 1 & 8 & 7 & 6 & 3 & 5 \end{pmatrix}$,

ե) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & \dots & \dots & \dots & \dots & \dots & 2n-1 & 2n \\ 2 & 4 & 6 & \dots & 1 & 3 & 5 & \dots & \dots & \dots \end{pmatrix}$,

ը) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & \dots & \dots & \dots & \dots & \dots & 2n & 2n+1 \\ 1 & 3 & 5 & \dots & 2 & 4 & 6 & \dots & \dots & \dots \end{pmatrix}$,

թ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & \dots & n-1 & n \\ n & n-1 & n-2 & \dots & 2 & 1 \end{pmatrix}$,

ժ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & \dots & n-1 & n \\ n & 1 & n-1 & 2 & \dots & \dots & \dots \end{pmatrix}$։

86. *Բազմապատկել տեղադրությունները տրված և հակառակ կարգով.*

ա) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 \\ 3 & 4 & 1 & 5 & 2 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 \\ 5 & 3 & 1 & 2 & 4 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 3 & 6 & 4 & 5 & 2 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 2 & 4 & 1 & 5 & 6 & 3 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 \\ 2 & 1 & 3 & 5 & 4 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 \\ 4 & 5 & 3 & 2 & 1 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 3 & 5 & 1 & 6 & 2 & 4 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 6 & 3 & 4 & 2 & 1 & 5 \end{pmatrix}$։

87. *Վերլուծել անկախ ցիկլերի արտադրյալի.*

ա) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 5 & 4 & 1 & 7 & 3 & 6 & 2 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 3 & 1 & 6 & 7 & 5 & 2 & 4 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 3 & 7 & 6 & 5 & 1 & 2 & 4 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 4 & 3 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$,

ե) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 4 & 3 & 8 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$,

զ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & ... & 2n-1 & 2n \\ 2 & 1 & 4 & 3 & ... & 2n & 2n-1 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 1 & 2 & ... & n & n+1 & n+2 & ... & 2n \\ n+1 & n+2 & ... & 2n & 1 & 2 & ... & n \end{pmatrix}$:

88. *Գրել տեղադրության կանոնավոր տեսքով.*

ա) $(\ 1\ \ 3\ \ 6\ )(\ 2\ \ 4\ \ 7\ )(\ 5\ )$,

բ) $(\ 1\ \ 6\ \ 5\ \ 4\ \ 2\ \ 3\ \ 7\ )$,

գ) $(1\ 3\ 6)(2\ 4\ 7\ 5)$,

դ) $(1\ 5\ 4\ 3\ 2\ 7\ 6)$:

ե) $(1\,2\,3\,\cdots\,n)$,

զ) $(\ 1\ \ 3\ \ 5\ \ ...\ \ 2n-1\ )(\ 2\ \ 4\ \ 6\ \ ...\ \ 2n\ )$,

է) $(i_1\, i_2\, i_3\, \cdots\, i_n)$, *ը)* $(i_1\, i_2)(i_3\, i_4)(i_5\, i_6)\ \cdots\ (i_{2n-1}\, i_{2n})$։

89. *Բազմապատկել տեղադրությունները.*

ա) $[(1\,3\,5)(2\,4\,6\,7)][(1\,4\,7)(2\,3\,5\,6)]$,

բ) $[(1\,3)(5\,7)(2\,4\,6)][(1\,3\,5)(2\,4)(6\,7)]$,

գ) $(1\,4\,7)(3\,6\,4\,2\,8)(3\,1\,5)$։

90. *Հաշվել* π^{100} *տեղադրությունը, եթե*

ա. $\pi = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 \\ 5 & 4 & 1 & 7 & 3 & 6 & 2 \end{pmatrix}$

բ. $\pi = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 4 & 3 & 8 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$։

91. *Լուծել* $\pi \cdot x = \sigma$ *հավասարումը, եթե*

$\pi = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 4 & 3 & 8 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$,

$\sigma = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 3 & 5 & 2 & 1 & 6 & 4 & 8 & 7 \end{pmatrix}$։

92. *Լուծել* $x \cdot \pi = \sigma$ *հավասարումը, եթե*

$\pi = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 4 & 3 & 8 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$,

$\sigma = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 3 & 5 & 2 & 1 & 6 & 4 & 8 & 7 \end{pmatrix}$։

93. *Լուծել* $\rho \cdot x \cdot \pi = \sigma$ *հավասարումը, եթե*

$\pi = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 4 & 3 & 8 & 6 & 7 & 1 & 5 & 2 \end{pmatrix}$,

$\rho = \begin{pmatrix} 2 & 7 & 5 & 4 & 8 & 3 & 6 & 1 \\ 3 & 5 & 8 & 7 & 2 & 6 & 1 & 4 \end{pmatrix}$,

$$\sigma = \begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 & 5 & 6 & 7 & 8 \\ 3 & 5 & 2 & 1 & 6 & 4 & 8 & 7 \end{pmatrix}:$$

94. *Ապացուցել, որ յուրաքանչյուր* $\pi \in \mathbf{S}_n$ *տեղադրություն կարելի է ներկայացնել* $(1\,2), (1\,3), \cdots, (1\,n)$ *դիրքափոխու– թյունների արտադրյալի տեսքով:*

95. *Ապացուցել, որ յուրաքանչյուր* $\pi \in \mathbf{S}_n$ *տեղադրություն կարելի է ներկայացնել* $(1\,2), (2\,3), ..., (n-1\,n)$ *դիրքափոխու– թյունների արտադրյալի տեսքով:*

96. *Ապացուցել, որ կամայական* $\pi \in \mathbf{S}_n$ *տեղադրություն կարելի է ներկայացնել* $(1\,2)$ *և* $(1\,2\,3\,...\,n)$ *ցիկլերի արտադրյալի տեսքով:*

4 Որոշիչներ

97. *Հաշվել որոշիչները.*

ա) $\begin{vmatrix} 4 & 6 \\ 6 & 8 \end{vmatrix}$, բ) $\begin{vmatrix} ab & ac \\ bd & cd \end{vmatrix}$, գ) $\begin{vmatrix} \cos\alpha & -\sin\alpha \\ \sin\alpha & \cos\alpha \end{vmatrix}$,

դ) $\begin{vmatrix} log_a b & 1 \\ 1 & log_b a \end{vmatrix}$, ե) $\begin{vmatrix} \cos\alpha + i\sin\alpha & 1 \\ 1 & \cos\alpha - i\sin\alpha \end{vmatrix}$,

զ) $\begin{vmatrix} 1 & 2 \\ 3 & 4 \end{vmatrix}$, է) $\begin{vmatrix} n+1 & n \\ n & n-1 \end{vmatrix}$ ։

98. *Հաշվել որոշիչները.*

ա) $\begin{vmatrix} 1 & 2 & 3 \\ 5 & 1 & 4 \\ 3 & 2 & 5 \end{vmatrix}$, բ) $\begin{vmatrix} -1 & 5 & 4 \\ 3 & -2 & 0 \\ -1 & 3 & 6 \end{vmatrix}$, գ) $\begin{vmatrix} 0 & 2 & 2 \\ 2 & 0 & 2 \\ 2 & 2 & 0 \end{vmatrix}$,

դ) $\begin{vmatrix} 1 & 2 & 3 \\ 4 & 5 & 6 \\ 7 & 8 & 9 \end{vmatrix}$, ե) $\begin{vmatrix} a & b & c \\ b & c & a \\ c & a & b \end{vmatrix}$, զ) $\begin{vmatrix} 0 & a & 0 \\ b & c & d \\ 0 & e & 0 \end{vmatrix}$,

է) $\begin{vmatrix} 1 & 0 & 1+i \\ 0 & 1 & i \\ 1-i & -i & 1 \end{vmatrix}$, ը) $\begin{vmatrix} 1 & \varepsilon & \varepsilon^2 \\ \varepsilon^2 & 1 & \varepsilon \\ \varepsilon & \varepsilon^2 & 1 \end{vmatrix}$,

$(\varepsilon = -\frac{1}{2} + i\frac{\sqrt{3}}{2})$ ։

99. *Լուծել հավասարումները.*

ա) $\begin{vmatrix} 3-x & 0 & 0 \\ 2 & 6-x & 4 \\ -2 & -3 & -1-x \end{vmatrix} = 0,$

բ) $\begin{vmatrix} 4-x & -1 & -1 \\ 2 & 1-x & -2 \\ 4 & -4 & -1-x \end{vmatrix} = 0,$

գ) $\begin{vmatrix} 1-x & 1 & 1 \\ 2 & 2-x & 2 \\ 3 & 3 & 3-x \end{vmatrix} = 0:$

100. *Ապացուցել, որ եթե 3-րդ կարգի մատրիցի յուրաքանչյուր գործակից հավասար է կամ* 1*-ի, կամ* -1*-ի, ապա դրա որոշիչը զույգ թիվ է:*

101. *Գտնել ամենամեծ թիվը, որին կարող է հավասարվել* ± 1 *գործակիցներով 3-րդ կարգի մատրիցի որոշիչը:*

102. *Գտնել ամենամեծ թիվը, որին կարող է հավասարվել* 1 *կամ* 0 *գործակիցներով 3-րդ կարգի մատրիցի որոշիչը:*

103. *Ինչպե՞ս կփոխվի մատրիցի որոշիչը, եթե*

ա) տեղափոխվեն դրա երկու տողեր,

բ) մի տողին գումարենք մեկ այլ տող,

գ) որևէ սյուն բազմապատկենք λ *թվով,*

դ) բոլոր թվերը փոխարինենք իրենց հակադիրներով,

ե) բոլոր թվերը փոխարինենք իրենց համալուծ կոմպլեքս թվերով,

զ) եթե սյուները դասավորենք հակառակ հերթականությամբ,

է) մատրիցը շրջենք (տրանսպոնացնենք) երկրորդ անկյունագծի նկատմամբ:

104. *Ձևակերպեք մի քանի պայմաններ, որոնց դեպքում որոշիչը հավասար է 0-ի:*

105. *ա) Քանի գումարելի կա չորրորդ կարգի որոշիչի վերլուծության բանաձևում:*

բ) Քանի գումարելի կա հինգերորդ կարգի որոշիչի վերլուծության բանաձևում:

106. *Հինգերորդ կարգի որոշիչի վերլուծության բանաձևում կան արդյո՞ք* $a_{15}a_{12}a_{34}a_{21}a_{43}$, $a_{55}a_{12}a_{34}a_{21}a_{43}$ *գումարելիներ:*

107. *Հինգերորդ կարգի որոշիչի վերլուծության բանաձևում ի՞նչ նշան ունեն* $a_{12}a_{21}a_{34}a_{45}a_{53}$, $a_{15}a_{23}a_{34}a_{41}a_{52}$ *գումարելիները:*

108. *Հետևյալ* $\begin{vmatrix} 2 & 21 & \underline{2} & 5 \\ 2 & 11 & -7 & \underline{-4} \\ 3 & \underline{3} & 1 & 1 \\ \underline{-11} & 3 & -2 & 2 \end{vmatrix}$ *որոշիչի համար*

ա) գտնել ընդգծված թվերի արտադրյալին համապատասխանող տեղադրությունն ու պարզել դրա նշանը,

բ) գտնել $\begin{pmatrix} 3 & 1 & 2 & 4 \\ 2 & 4 & 3 & 1 \end{pmatrix}$ *տեղադրությանը համապատասխանող արտադրյալը:*

109. *Հաշվել որոշիչները.*

ա) $\begin{vmatrix} 0 & 0 & 0 & -1 \\ 0 & 0 & -1 & 0 \\ 0 & 1 & 0 & 0 \\ 1 & 0 & 0 & 0 \end{vmatrix}$, *բ)* $\begin{vmatrix} 0 & 0 & -1 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 \\ 1 & 0 & 0 & 0 \\ 0 & -1 & 0 & 0 \end{vmatrix}$,

գ) $\begin{vmatrix} 0 & -1 & 0 & 0 \\ 1 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & -1 \\ 0 & 0 & 1 & 0 \end{vmatrix}$, *դ)* $\begin{vmatrix} 1 & -2 & 1 & 0 \\ 0 & 1 & -2 & 1 \\ 0 & 0 & 1 & -2 \\ 0 & 0 & 0 & 1 \end{vmatrix}$,

$$
ե)\begin{vmatrix} 1&2&2&2\\ 2&1&2&2\\ 2&2&1&2\\ 2&2&2&1 \end{vmatrix},\; զ)\begin{vmatrix} 0&0&7&1\\ 0&0&7&2\\ 0&0&7&3\\ 4&3&2&1 \end{vmatrix},
$$

$$
է)\begin{vmatrix} 1&1&1&1\\ 1&0&1&1\\ 0&0&1&0\\ 0&0&1&1 \end{vmatrix},\; ը)\begin{vmatrix} 1&0&-1&-2\\ -2&-1&0&1\\ 1&2&0&0\\ 0&-1&0&0 \end{vmatrix},
$$

$$
թ)\begin{vmatrix} 0&1&1&1\\ -1&0&1&1\\ -1&-1&0&1\\ -1&-1&-1&0 \end{vmatrix},\; ժ)\begin{vmatrix} 0&-1&1&-1\\ 1&0&-1&1\\ -1&1&0&-1\\ 1&-1&1&0 \end{vmatrix},
$$

$$
ի)\begin{vmatrix} 2&3&4&5\\ 3&3&4&5\\ 4&4&4&5\\ 5&5&5&5 \end{vmatrix},\; լ)\begin{vmatrix} 3&3&-4&-3\\ 0&6&1&1\\ 5&4&2&1\\ 2&3&3&2 \end{vmatrix},
$$

$$
խ)\begin{vmatrix} 25&31&17&43\\ 75&94&53&132\\ 75&94&54&134\\ 25&32&20&48 \end{vmatrix},\; ծ)\begin{vmatrix} 35&59&71&52\\ 42&70&77&54\\ 43&68&72&52\\ 29&49&65&50 \end{vmatrix},
$$

$$
կ)\begin{vmatrix} 5&4&1&3\\ 2&1&1&4\\ 3&2&1&1\\ 1&3&-2&2 \end{vmatrix},\; հ)\begin{vmatrix} \frac{1}{\sqrt{10}}&\frac{1}{2}&\frac{1}{2}&\frac{2}{\sqrt{10}}\\ \frac{2}{\sqrt{10}}&\frac{1}{2}&-\frac{1}{2}&-\frac{1}{\sqrt{10}}\\ \frac{1}{\sqrt{10}}&-\frac{1}{2}&-\frac{1}{2}&\frac{2}{\sqrt{10}}\\ \frac{2}{\sqrt{10}}&-\frac{1}{2}&\frac{1}{2}&-\frac{1}{\sqrt{10}} \end{vmatrix}:
$$

110. *Հաշվել որոշիչները.*

$$ա) \begin{vmatrix} 1 & 2 & 5 & 5 & 5 \\ 3 & 4 & 6 & 6 & 6 \\ 0 & 0 & 1 & 1 & 1 \\ 0 & 0 & 1 & 2 & 2 \\ 0 & 0 & 1 & 2 & 3 \end{vmatrix}, \quad բ) \begin{vmatrix} 1 & 1 & 1 & 0 & 0 \\ 1 & 2 & 3 & 0 & 0 \\ 0 & 1 & 1 & 1 & 1 \\ 0 & 2 & 3 & 4 & 5 \\ 0 & 4 & 9 & 16 & 25 \end{vmatrix},$$

$$գ) \begin{vmatrix} 1 & 10 & 100 & 1000 & 10000 \\ 0,1 & 2 & 30 & 400 & 5000 \\ 0 & 0,1 & 3 & 60 & 800 \\ 0 & 0 & 0,1 & 4 & 90 \\ 0 & 0 & 0 & 0,1 & 5 \end{vmatrix},$$

$$դ) \begin{vmatrix} 0 & 7 & 0 & 1 & 0 \\ 1 & 4 & 3 & 9 & 1 \\ 0 & 1 & 0 & 5 & 0 \\ 2 & 8 & 4 & 7 & 5 \\ 0 & 3 & 0 & 1 & 0 \end{vmatrix}, \quad ե) \begin{vmatrix} 4 & 3 & -4 & 2 & 2 \\ 2 & -1 & -3 & -4 & 2 \\ 3 & 1 & 1 & 2 & -1 \\ 1 & 2 & 3 & 4 & -1 \\ -1 & 1 & -1 & -2 & 3 \end{vmatrix},$$

$$զ) \begin{vmatrix} 24 & 11 & 13 & 17 & 19 \\ 51 & 13 & 32 & 40 & 46 \\ 61 & 11 & 14 & 50 & 56 \\ 62 & 20 & 7 & 13 & 52 \\ 80 & 24 & 45 & 57 & 70 \end{vmatrix}:$$

111. *Ի՞նչ նշանով է «մտնում» n-րդ կարգի որոշիչի մեջ*

ա) գլխավոր (առաջին) անկյունագծի վրա գտնվող տարրերի արտադրյալը,

բ) երկրորդ անկյունագծի վրա գտնվող տարրերի արտադրյալը:

112. *Ապացուցել, որ անկյունագծային մատրիցի որոշիչը հավասար է իր անկյունագծի թվերի արտադրյալին:*

113. *Ապացուցել, որ եռանկյունաձև մատրիցի որոշիչը հավասար է իր անկյունագծի թվերի արտադրյալին:*

114. *Դիցուք* $n \times n$ *չափի մատրիցի ճիշտ* n *գործակիցներ հավասար են 1-ի, իսկ մնացած գործակիցները՝ 0-ի: Ինչի՞ կարող է հավասար լինել նման մատրիցի որոշիչը:*

115. *Գտնել մատրիցի որոշիչը, եթե հայտնի է, որ նրա զույգ համարով տողերի գումարը հավասար է կենտ համարով տողերի գումարին:*

116. *Ապացուցել, որ* n *չափի մատրիցի որոշիչը հավասար է 0-ի, եթե այն ունի* $k \times m$ *չափի 0-ական ենթամատրից, որտեղ* $k + m > n$*:*

117. *Հաշվել հետևյալ* n*-րդ կարգի որոշիչները.*

$$\text{ա)}\ \begin{vmatrix} 1 & 2 & 3 & \cdots & n \\ -1 & 0 & 3 & \cdots & n \\ -1 & -2 & 0 & \cdots & n \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ -1 & -2 & -3 & \cdots & 0 \end{vmatrix},$$

$$\text{բ)}\ \begin{vmatrix} 3 & 2 & 2 & \cdots & 2 \\ 2 & 3 & 2 & \cdots & 2 \\ 2 & 2 & 3 & \cdots & 2 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 2 & 2 & 2 & \cdots & 3 \end{vmatrix},$$

$$\text{գ)}\ \begin{vmatrix} 1 & 2 & 3 & \cdots & n-2 & n-1 & n \\ 2 & 3 & 4 & \cdots & n-1 & n & n \\ 3 & 4 & 5 & \cdots & n & n & n \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ n & n & n & \cdots & n & n & n \end{vmatrix},$$

$$\text{դ)}\ \begin{vmatrix} a_0 & a_1 & a_2 & \cdots & a_n \\ -x & x & 0 & \cdots & 0 \\ 0 & -x & x & \cdots & 0 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 0 & 0 & 0 & \cdots & x \end{vmatrix},$$

ե) $\begin{vmatrix} 1 & n & n & \cdots & n \\ n & 2 & n & \cdots & n \\ n & n & 3 & \cdots & n \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ n & n & n & \cdots & n \end{vmatrix}$,

զ) $\begin{vmatrix} 1-n & 1 & 1 & \cdots & 1 \\ 1 & 1-n & 1 & \cdots & 1 \\ 1 & 1 & 1-n & \cdots & 1 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 1 & 1 & 1 & \cdots & 1-n \end{vmatrix}$,

է) $\begin{vmatrix} 0 & 1 & 1 & \cdots & 1 \\ 1 & 0 & 1 & \cdots & 1 \\ 1 & 1 & 0 & \cdots & 1 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 1 & 1 & 1 & \cdots & 0 \end{vmatrix}$,

ը) $\begin{vmatrix} n & 1 & 1 & \cdots & 1 \\ 1 & n & 1 & \cdots & 1 \\ 1 & 1 & n & \cdots & 1 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 1 & 1 & 1 & \cdots & n \end{vmatrix}$,

թ) $\begin{vmatrix} a & b & \cdots & b & b \\ b & a & \cdots & b & b \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ b & b & \cdots & a & b \\ b & b & \cdots & b & a \end{vmatrix}$, ժ) $$\begin{vmatrix} x & y & 0 & 0 & \cdots & 0 & 0 \\ 0 & x & y & 0 & \cdots & 0 & 0 \\ 0 & 0 & x & y & \cdots & 0 & 0 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 0 & 0 & 0 & 0 & \cdots & x & y \\ y & 0 & 0 & 0 & \cdots & 0 & x \end{vmatrix},$$

ի) $$\begin{vmatrix} 1 & 2 & 0 & 0 & \cdots & 0 \\ 1 & 3 & 2 & 0 & \cdots & 0 \\ 0 & 1 & 3 & 2 & \cdots & 0 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 0 & 0 & 0 & 0 & \cdots & 3 \end{vmatrix},$$

լ) $$\begin{vmatrix} 1 & x_1 & x_1^2 & \cdots & x_1^{n-1} \\ 1 & x_2 & x_2^2 & \cdots & x_2^{n-1} \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 1 & x_n & x_n^2 & \cdots & x_n^{n-1} \end{vmatrix},$$

խ) $$\begin{vmatrix} 1 & 1 & 1 & \cdots & 1 \\ 1 & 2 & 2^2 & \cdots & 2^n \\ 1 & 3 & 3^2 & \cdots & 3^n \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 1 & n+1 & (n+1)^2 & \cdots & (n+1)^n \end{vmatrix},$$

ծ) $$\begin{vmatrix} 2 & 1 & 0 & 0 & \cdots & 0 & 0 \\ 1 & 2 & 1 & 0 & \cdots & 0 & 0 \\ 0 & 1 & 2 & 1 & \cdots & 0 & 0 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 0 & 0 & 0 & 0 & \cdots & 1 & 2 \end{vmatrix},$$

կ) $$\begin{vmatrix} a+b & ab & 0 & 0 & \cdots & 0 & 0 \\ 1 & a+b & ab & 0 & \cdots & 0 & 0 \\ 0 & 1 & a+b & ab & \cdots & 0 & 0 \\ \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots & \cdots \\ 0 & 0 & 0 & 0 & \cdots & 1 & a+b \end{vmatrix}:$$

5 Մատրիցներ, գործողություններ դրանց հետ

118. *Ի՞նչ պայմանների դեպքում կարելի է մատրիցներն իրար գումարել:*

119. *Հաշվել մատրիցների գծային զուգակցությունը.*

ա) $3\begin{pmatrix} 1 & 2 \\ 1 & 2 \end{pmatrix} - \begin{pmatrix} 3 & 2 \\ 3 & 2 \end{pmatrix} - 4\begin{pmatrix} 0 & 1 \\ 0 & 1 \end{pmatrix}$,

բ) $2\begin{pmatrix} 2 \\ 2 \\ 1 \end{pmatrix} - 3\begin{pmatrix} 0 \\ 5 \\ 6 \end{pmatrix}$,

գ) $2\begin{pmatrix} 1 & 8 & 7 & -15 \\ 1 & -5 & -6 & 11 \end{pmatrix} - \begin{pmatrix} 5 & 24 & -7 & -1 \\ -1 & -2 & 7 & 3 \end{pmatrix}$:

120. *Կարելի՞ է արդյոք*

ա) m *երկարությամբ տողը բազմապատկել* n *երկարությամբ սյունով,*

բ) n *երկարությամբ սյունը բազմապատկել* m *երկարությամբ տողով:*

121. *Հաշվել մատրիցների արտադրյալը.*

ա) $\begin{pmatrix} 2 & -3 & 0 \end{pmatrix}\begin{pmatrix} 4 \\ 3 \\ 1 \end{pmatrix}$, *բ)* $\begin{pmatrix} 4 \\ 3 \\ 1 \end{pmatrix}\begin{pmatrix} 2 & -3 & 0 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}\begin{pmatrix} 3 & 5 \\ 5 & 9 \end{pmatrix}$, *դ)* $\begin{pmatrix} 1 & n \\ 0 & 1 \end{pmatrix}\begin{pmatrix} 1 & m \\ 0 & 1 \end{pmatrix}$, *ե)* $\begin{pmatrix} \cos a & -\sin a \\ \sin a & \cos a \end{pmatrix} \begin{pmatrix} \cos b & -\sin b \\ \sin b & \cos b \end{pmatrix}$,

զ) $\begin{pmatrix} 3 & -4 & 5 \\ 2 & -3 & 1 \\ 3 & -5 & -1 \end{pmatrix} \begin{pmatrix} 3 & 29 \\ 2 & 18 \\ 0 & -3 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 1 & 5 & 3 \\ 2 & -3 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 2 & -3 & 5 \\ -1 & 4 & -2 \\ 3 & -1 & 1 \end{pmatrix}$,

ը) $\begin{pmatrix} 1 & 2 & 1 \\ 3 & 1 & 3 \\ 1 & 2 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 3 & 1 \\ 2 & 1 & 2 \\ 1 & 3 & 1 \end{pmatrix}$,

թ) $\begin{pmatrix} 1 & -1 & 3 \\ -1 & 1 & -3 \\ 2 & -2 & 6 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 5 & 2 \\ 0 & 3 & -1 \\ 2 & 1 & -1 \end{pmatrix}$,

ժ) $\begin{pmatrix} 1 & 2 & 0 & 0 \\ 2 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 & 3 \\ 0 & 0 & 3 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 1 & 0 & 0 \\ 1 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 & -1 \\ 0 & 0 & -1 & 1 \end{pmatrix}$,

ի) $\begin{pmatrix} 1 & 1 & 0 & 0 \\ 1 & 2 & 0 & 0 \\ 0 & 0 & 3 & 1 \\ 0 & 0 & 1 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 1 & 0 & 0 \\ 1 & 3 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 & 2 \\ 0 & 0 & -3 & 1 \end{pmatrix}$,

լ) $\begin{pmatrix} 2 \\ 4 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 \end{pmatrix} \begin{pmatrix} 2 \\ 1 \end{pmatrix}$,

խ) $\begin{pmatrix} 1 & 2 \end{pmatrix} \begin{pmatrix} 2 \\ 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 2 & 4 \end{pmatrix}$:

122. *Կատարել գործողությունները.*

ա) $\begin{pmatrix} 3 & 0 & 2 & 0 \\ 0 & 1 & 2 & 1 \\ 2 & 3 & 0 & 0 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & -2 & 2 \\ 2 & -1 & 1 \\ -1 & 1 & -2 \\ 2 & 2 & -1 \end{pmatrix} +$

$\begin{pmatrix} -2 & 0 & -3 \\ 0 & 6 & -3 \\ 5 & -2 & 8 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 3 & 0 & 2 \\ 0 & 1 & 3 \\ 2 & 2 & 0 \\ 0 & 1 & 0 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 2 & -1 & 2 \\ -2 & -1 & 1 & 2 \\ 2 & 1 & 1 & 2 \end{pmatrix} +$

$\begin{pmatrix} 0 & -4 & 6 & 1 \\ 2 & 2 & -5 & -2 \\ 2 & -2 & 6 & 4 \\ 1 & 3 & 0 & 1 \end{pmatrix}$:

123. *Հաշվել.*

ա) $\begin{pmatrix} 1 & 2 & 2 \\ 2 & 1 & -2 \\ 2 & -2 & 1 \end{pmatrix}^2$, *բ)* $\begin{pmatrix} 0 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 \\ 1 & 0 & 0 & 0 \end{pmatrix}^2$,

գ) $\begin{pmatrix} 1 & 1 & 1 & 1 \\ 1 & 1 & -1 & -1 \\ 1 & -1 & 1 & -1 \\ 1 & -1 & -1 & 1 \end{pmatrix}^2$, *դ)* $\begin{pmatrix} 0 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 2 & 0 \\ 0 & 0 & 0 & 3 \\ 0 & 0 & 0 & 0 \end{pmatrix}^2$,

124. *Հաշվել.*

ա) $\begin{pmatrix} \cos a & \sin a \\ -\sin a & \cos a \end{pmatrix}^n$, *բ)* $\begin{pmatrix} c & 1 \\ 0 & c \end{pmatrix}^n$, գ) $\left(\begin{pmatrix} 2 & 1 \\ 5 & 3 \end{pmatrix}\begin{pmatrix} 1 & 0 \\ 1 & 1 \end{pmatrix}\begin{pmatrix} 3 & -1 \\ -5 & 2 \end{pmatrix}\right)^n$,

դ) $\begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}^n$, ե) $\begin{pmatrix} 1 & 1 & 1 \\ 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 \end{pmatrix}^n$,

զ) $\begin{pmatrix} 0 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 \\ 0 & 0 & 0 & 0 \end{pmatrix}^3$ ։

125. *Շրջել (պրանսպոնացնել) հետևյալ մատրիցները.*

ա) $\begin{pmatrix} 7 & -4 \\ -5 & 3 \end{pmatrix}$, բ) $\begin{pmatrix} 0 & 0 & \ldots & 0 & a_1 \\ 0 & 0 & \ldots & a_2 & 0 \\ . & . & . & . & . \\ 0 & a_{n-1} & \ldots & 0 & 0 \\ a_n & 0 & \ldots & 0 & 0 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 \end{pmatrix}$, դ) $\begin{pmatrix} 1 \\ 2 \\ 3 \\ 4 \end{pmatrix}$ ։

126. *Ապացուցել, որ*

ա) $(A+B)^T = A^T + B^T$, բ) $(AB)^T = B^T A^T$։

127. *Ի՞նչ կարելի է ասել A և B մատրիցների չափերի մասին, եթե $AB = BA$։*

128. *Քառակուսի մատրիցի անկյունագծի թվերի գումար կոչվում է այդ մատրիցի* ***հետք****։ Ապացուցել, որ*

ա) AB և BA մատրիցների հետքերը հավասար են,

բ) CAC^{-1} և A մատրիցների հետքերը հավասար են։

129. *Գտնել բոլոր այն n չափի մատրիցները, որոնց համար կամայական X մատրիցի դեպքում AX մատրիցի հետքը հավասար է 0-ի:*

130. *Հաշվել $AB - BA$ մատրիցը, եթե*

ա) $A = \begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}$, $B = \begin{pmatrix} 1 & -1 \\ 1 & -1 \end{pmatrix}$

բ) $A = \begin{pmatrix} 0 & -1 \\ 1 & 0 \end{pmatrix}$, $B = \begin{pmatrix} 1 & -1 \\ 1 & 1 \end{pmatrix}$*:*

131. *Հաշվել $f(A)$-ն, եթե*

ա) $f(t) = t^2 - 2t + 1$, $A = \begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}$,

բ) $f(t) = t^2 - 3t + 2$, $A = \begin{pmatrix} 0 & -2 \\ 1 & 3 \end{pmatrix}$*:*

132. *Ո՞ր մատրիցով և ո՞ր կողմից պետք է բազմապատկել տրված A մատրիցը, որպեսզի արդյունքում ստացվի*

ա) A մատրիցի առաջին տողը,

բ) A մատրիցի առաջին սյունը:

133. *Ընտրել F տարրական մատրիցն այնպես, որ FA մատրիցն ստացվի A մատրիցից, վերջինիս*

ա) առաջին և երկրորդ տողերի տեղափոխությամբ,

բ) առաջին տողը երկրորդ տողին գումարելով,

գ) առաջին տողը $c \neq 0$ թվով բազմապատկելով,

Ընտրել F տարրական մատրիցն այնպես, որ AF մատրիցն ստացվի A մատրիցից, վերջինիս

դ) առաջին և երկրորդ սյուների տեղափոխությամբ,

ե) առաջին սյունը երրորդ սյանը գումարելով,

զ) երկրորդ սյունը $c \neq 0$ թվով բազմապատկելով:

134. *Ապացուցել, որ եթե* A*-ն,* B*-ն քառակուսի մատրիցներ են և* $AB = E$*, ապա* $detA \neq 0$*,* $detB \neq 0$ *և* $detA = (detB)^{-1}$*:*

135. *Հաշվել.*

ա) $\begin{pmatrix} 3 & 5 \\ 5 & 9 \end{pmatrix}^{-1}$, *բ)* $\begin{pmatrix} 2 & -1 & 0 \\ 0 & 2 & -1 \\ -1 & -1 & 1 \end{pmatrix}^{-1}$,

գ) $\begin{pmatrix} 0 & 0 & ... & 0 & a_n \\ 0 & 0 & ... & a_{n-1} & 0 \\ ... & ... & ... & ... & ... \\ 0 & a_2 & ... & 0 & 0 \\ a_1 & 0 & ... & 0 & 0 \end{pmatrix}^{-1}$,

դ) $\begin{pmatrix} 2 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}^{-1}$, *ե)* $\begin{pmatrix} \cos a & -\sin a \\ \sin a & \cos a \end{pmatrix}^{-1}$,

զ) $\begin{pmatrix} 1 & 2 & 0 \\ 2 & 5 & -2 \\ 0 & -2 & 5 \end{pmatrix}^{-1}$, *է)* $\begin{pmatrix} 1 & 2 & 2 \\ 2 & 1 & -2 \\ 2 & -2 & 1 \end{pmatrix}^{-1}$,

ը) $\begin{pmatrix} 1 & 1 & 1 \\ 1 & 2 & 2 \\ 2 & 3 & 4 \end{pmatrix}^{-1}$*:*

136. *Հաշվել հետևյալ պարզական մատրիցների հակադարձը.*

ա) $\begin{pmatrix} -2 & 0 \\ 0 & 1 \end{pmatrix}$, *բ)* $\begin{pmatrix} 0 & 1 \\ 1 & 0 \end{pmatrix}$, *գ)* $\begin{pmatrix} 1 & 0 \\ 3 & 1 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & -2 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{pmatrix}$, *ե)* $\begin{pmatrix} 3 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{pmatrix}$, *զ)* $\begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 2 & 0 & 1 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ 0 & -1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{pmatrix}$, *ը)* $\begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 \\ 0 & 1 & 0 \end{pmatrix}$*:*

137. *Պարզել, թե հետևյալ հավասարություններից որոնք են ճիշտ $n \times n$ չափի բոլոր մատրիցների համար.*

ա) $(A^T)^{-1} = (A^{-1})^T$, *բ)* $(\alpha A)^{-1} = \alpha^{-1} A^{-1}$,

գ) $(AB)^{-1} = B^{-1}A^{-1}$, *դ)* $(ABC)^{-1} = C^{-1}B^{-1}A^{-1}$,

ե) $(A^{-1})^k = (A^k)^{-1}$, *զ)* $(A+B)^{-1} = A^{-1} + B^{-1}$:

138. *ա) Ապացուցել, որ քառակուսի մատրիցից տողերի պարզական ձևափոխությունների օգնությամբ կարելի է ստանալ միավոր մատրից այն և միայն այն դեպքում, երբ այն չվերասերված մատրից է:*

բ) Ապացուցել, որ քառակուսի մատրիցից սյուների պարզական ձևափոխությունների օգնությամբ կարելի է ստանալ միավոր մատրից այն և միայն այն դեպքում, երբ այն չվերասերված մատրից է:

139. *Ապացուցել, որ յուրաքանչյուր չվերասերված մատրից կամ պարզական մատրից է, կամ հավասար է պարզական մատրիցների արտադրյալի:*

140. *Նկարագրել և հիմնավորել A^{-1} մատրիցը հաշվելու եղանակը՝ A և E մատրիցների տողերի պարզական ձևափոխությունների օգնությամբ:*

141. *Հաշվել.*

ա) $\begin{pmatrix} 0 & 0 & -1 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 \\ 1 & 0 & 0 & 0 \\ 0 & -1 & 0 & 0 \end{pmatrix}^{-1}$, *բ)* $\begin{pmatrix} 1 & 1 & 1 & 0 \\ -1 & 2 & 1 & 0 \\ 1 & 4 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 3 \end{pmatrix}^{-1}$,

գ) $\begin{pmatrix} 1 & 1 & ... & 1 \\ 0 & 1 & ... & 1 \\ ... & ... & ... & ... \\ 0 & 0 & ... & 1 \end{pmatrix}^{-1}$, *դ)* $\begin{pmatrix} 0 & 0 & 0 & -1 \\ 0 & 0 & -1 & 0 \\ 0 & 1 & 0 & 0 \\ 1 & 0 & 0 & 0 \end{pmatrix}^{-1}$, ե) $\begin{pmatrix} 0 & -1 & 0 & 0 \\ 1 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & -1 \\ 0 & 0 & 1 & 0 \end{pmatrix}^{-1}$, զ) $\begin{pmatrix} 1 & -2 & 1 & 0 \\ 0 & 1 & -2 & 1 \\ 0 & 0 & 1 & -2 \\ 0 & 0 & 0 & 1 \end{pmatrix}^{-1}$,

է) $\begin{pmatrix} 1 & 1 & 0 & ... & 0 & 0 \\ 0 & 1 & 1 & ... & 0 & 0 \\ ... & ... & ... & ... & ... & ... \\ 0 & 0 & 0 & ... & 1 & 1 \\ 0 & 0 & 0 & ... & 0 & 1 \end{pmatrix}^{-1}$,

ը) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & ... & n \\ 0 & 1 & 2 & ... & n-1 \\ ... & ... & ... & ... & ... \\ 0 & 0 & 0 & ... & 1 \end{pmatrix}^{-1}$,

142. *Դիցուք* $A^2 + A + E = 0$*: Ապացուցել, որ* A *մատրիցը չվերասերված է և* A^{-1} *մատրիցն արտահայտել* A *և* E *մատրիցների միջոցով:*

143. *Դիցուք* $A^m = 0$*: Ապացուցել, որ*

$$(E - A)^{-1} = E + A + ... + A^{m-1} :$$

144. *Դիցուք* $AB = BA$ *և* AB*-ն չվերասերված մատրից է: Ապացուցել, որ այդ դեպքում*

ա) և՛ A*-ն, և՛* B*-ն քառակուսի մատրիցներ են,*

բ) և՛ A*-ն, և՛* B*-ն չվերասերված մատրիցներ են,*

գ) $A^{-1}B^{-1} = B^{-1}A^{-1}$*:*

145. *Ստուգել, որ* $(BAB^{-1})^n = BA^nB^{-1}$*:*

146. *ա) Նկարագրել և հիմնավորել $A^{-1}B$ մատրիցը հաշվելու եղանակ՝ A և B մատրիցների տողերի տարրական ձևափոխությունների օգնությամբ:*

բ) Նկարագրել և հիմնավորել AB^{-1} մատրիցը հաշվելու եղանակ՝ A և B մատրիցների սյուների տարրական ձևափոխությունների օգնությամբ:

147. *Հաշվել մատրիցների արտադրյալը.*

ա) $\begin{pmatrix} 1 & 1 \\ 0 & 1 \end{pmatrix}^{-1} \begin{pmatrix} 2 & 5 \\ 1 & 3 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 \\ 2 & 3 & 4 \\ 3 & 4 & 5 \end{pmatrix} \begin{pmatrix} 2 & 2 & -1 \\ 2 & -1 & 2 \\ -1 & 2 & 2 \end{pmatrix}^{-1}$,

գ) $\begin{pmatrix} 2 & 2 & -1 \\ 2 & -1 & 2 \\ -1 & 2 & 2 \end{pmatrix}^{-1} \begin{pmatrix} 1 & 2 & 3 \\ 2 & 3 & 4 \\ 3 & 4 & 5 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 4 \\ 0 & 1 & 2 & 3 \\ 0 & 0 & 1 & 2 \\ 0 & 0 & 0 & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 0 & 0 & -1 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 \\ 1 & 0 & 0 & 0 \\ 0 & -1 & 0 & 0 \end{pmatrix}^{-1}$,

ե) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & \dots & n \\ 0 & 1 & 2 & \dots & n-1 \\ \dots & \dots & \dots & \dots & \dots \\ 0 & 0 & 0 & \dots & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} 1 & 1 & \dots & 1 \\ 0 & 1 & \dots & 1 \\ \dots & \dots & \dots & \dots \\ 0 & 0 & \dots & 1 \\ 0 & 0 & \dots & 1 \end{pmatrix}^{-1}$:

148. *Դիցուք A-ն և C-ն չվերասերված մատրիցներ են: Լուծել հետևյալ մատրիցային հավասարումները.*

ա) $AX = 0$, *բ)* $AX = B$, *գ)* $XA = B$,

դ) $AXC = B$, *ե)* $A(X + C) = B$:

149. *Հավասարումից գտնել* X *մատրիցը.*

ա) $\begin{pmatrix} 2 & 5 \\ 1 & 3 \end{pmatrix} X = \begin{pmatrix} 2 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}$,

բ) $X \begin{pmatrix} 2 & 5 \\ 1 & 3 \end{pmatrix} = \begin{pmatrix} 2 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 2 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix} X = \begin{pmatrix} 10 \\ 17 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & 2 & 0 \\ 2 & 5 & -2 \\ 0 & -2 & 5 \end{pmatrix} X = \begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ 0 & 1 & 1 \\ 0 & 1 & 0 \end{pmatrix}$,

ե) $X \begin{pmatrix} 2 & 2 & -1 \\ 2 & -1 & 2 \\ -1 & 2 & 2 \end{pmatrix} = \begin{pmatrix} 5 & 5 & 2 \\ 5 & 8 & -1 \end{pmatrix}$,

զ) $X \begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix} = \begin{pmatrix} 1 & -1 \\ 1 & -1 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 1 & 1 \\ 0 & 1 \end{pmatrix} X = X \begin{pmatrix} 1 & 1 \\ 0 & 1 \end{pmatrix}$:

6 Մատրիցի ռանգ

150. *Նկարագրել 0 ռանգ ունեցող բոլոր մատրիցները:*

151. *Նկարագրել 1 ռանգ ունեցող բոլոր մատրիցները:*

152. *Կարող է արդյոք մատրիցը չունենալ հենքային մինոր:*

153. *Քանի՞ k չափի մինոր ունի $m \times n$ չափի մատրիցը:*

154. *Հետևյալ մատրիցներում նշել որևէ հենքային մինոր և որոշել ռանգը.*

ա) $\begin{pmatrix} 0 & 0 \\ 0 & 0 \end{pmatrix}$, *բ)* $\begin{pmatrix} 1 & -1 \\ 2 & -2 \end{pmatrix}$, *գ)* $\begin{pmatrix} 1 & 0 \\ 0 & 1 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 0 & 1 \\ 0 & 0 \end{pmatrix}$, *ե)* $\begin{pmatrix} 0 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 1 & 0 & 0 \end{pmatrix}$, *զ)* $\begin{pmatrix} 1 & 1 & 1 \\ 2 & 2 & 3 \\ 3 & 3 & 4 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 2 & 1 & 1 & 1 & 1 \\ 2 & 1 & 1 & 2 & 3 \\ 4 & 2 & 2 & 3 & 4 \\ 2 & 1 & 1 & 1 & 1 \end{pmatrix}$:

155. *Խնդիր 154-ի ա)–է) մատրիցներում նշել հենքային տողեր և հենքային սյուներ:*

156. *Տրված քառակուսի մատրիցի համար նշել հենքային մինոր, հենքային տողեր և հենքային սյուներ, եթե հայտնի է, որ դրա որոշիչը 0 չէ: Ինչի՞ է հավասար նման մատրիցի ռանգը:*

157. *Ապացուցել, որ անկյունագծային մատրիցի ռանգը հավասար է դրա 0-ից տարբեր տարրերի քանակին:*

158. *Ապացուցել, որ եթե մատրիցի բոլոր k չափի մինորները 0 են, ապա 0 են նաև դրա բոլոր $k+1$ չափի մինորները:*

159. *Ապացուցել, որ մատրիցի ռանգը մեծ կամ հավասար է իր յուրաքանչյուր ենթամատրիցի ռանգից:*

160. *ա) Ապացուցել, որ մատրիցին 0-ական տող կամ 0-ական սյուն ավելացնելով՝ դրա ռանգը չի փոխվի:*

բ) Ապացուցել, որ եթե մատրիցին ավելացնենք սյուն (տող), ապա ռանգը չի փոքրանա:

գ) Ապացուցել, որ եթե մատրիցին ավելացնենք սյուն (տող), որը դրա սյուների (տողերի) գծային զուգակցություն է, ապա ռանգը չի փոխվի:

161. *Ապացուցել, որ եթե A մատրիցի տողերը B մատրիցի տողերի գծային զուգակցություն են, ապա $rank(A) \leq rank(B)$:*

162. *Գնահատել $\begin{pmatrix} A & B \end{pmatrix}$ մատրիցի ռանգը A և B մատրիցների ռանգերի միջոցով:*

163. *Հաշվել մատրիցների ռանգը.*

ա) $\begin{pmatrix} 1 & 0 \end{pmatrix}$, *բ)* $\begin{pmatrix} 0 & 1 & 0 \end{pmatrix}$, *գ)* $\begin{pmatrix} 0 & 0 \\ 0 & 2 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 0 & 1 \\ 1 & 0 \end{pmatrix}$, *ե)* $\begin{pmatrix} 1 & 1 \\ 0 & 1 \end{pmatrix}$, *զ)* $\begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \end{pmatrix}$,

է) $\begin{pmatrix} 1+\sqrt{2} & 2-\sqrt{5} \\ 2+\sqrt{5} & 1-\sqrt{2} \end{pmatrix}$, *ը)* $\begin{pmatrix} 1+i\sqrt{2} & 3 \\ 1 & 1-i\sqrt{2} \end{pmatrix}$, *թ)* $\begin{pmatrix} 1 & 1 \\ 1 & 1 \\ 2 & 2 \end{pmatrix}$, *ժ)* $\begin{pmatrix} 1 & 2 & 2 \\ 2 & 1 & -2 \\ 2 & -2 & 1 \end{pmatrix}$, *ի)* $\begin{pmatrix} 1 & 2 & 3 \\ 2 & 3 & 4 \\ 3 & 4 & 5 \end{pmatrix}$,

լ) $\begin{pmatrix} 1 & -1 & 2 \\ 3 & -3 & 6 \\ 2 & -2 & 4 \end{pmatrix}$, *խ)* $\begin{pmatrix} 13 & 16 & 16 \\ -5 & -7 & -6 \\ -6 & -8 & -7 \end{pmatrix}$,

ծ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 \\ 2 & 3 & 4 \\ 1 & 1 & 1 \end{pmatrix}$, *կ)* $\begin{pmatrix} 1+i\sqrt{2} & i-\sqrt{2} & 1 \\ 1+i\sqrt{3} & i-\sqrt{3} & 1 \\ 1+i\sqrt{4} & i-\sqrt{4} & 1 \end{pmatrix}$,

հ) $\begin{pmatrix} 1 & 1 & 3 \\ 2 & 2 & 6 \\ 0 & 3 & 0 \\ 0 & 4 & 0 \end{pmatrix}$, *ձ)* $\begin{pmatrix} 2 & 1 & 3 \\ 4 & 2 & 7 \\ 0 & 5 & 0 \\ 0 & 3 & 1 \end{pmatrix}$, *ղ)* $\begin{pmatrix} 2 & 4 & 2 \\ -1 & -2 & -1 \\ 1 & 5 & 3 \\ 8 & 1 & -2 \\ 2 & 7 & 4 \end{pmatrix}$,

ճ) $\begin{pmatrix} 0 & 0 & 0 & 1 \\ 0 & 0 & 0 & 2 \\ 0 & 0 & 0 & 3 \\ 1 & 2 & 3 & 4 \end{pmatrix}$, *մ)* $\begin{pmatrix} 0 & 0 & 9 & 1 \\ 0 & 0 & 9 & 2 \\ 0 & 0 & 9 & 3 \\ 1 & 2 & 3 & 4 \end{pmatrix}$,

յ) $\begin{pmatrix} 0 & 0 & 1 & 4 \\ 0 & 0 & 2 & 5 \\ 1 & 2 & 3 & 6 \\ 4 & 5 & 6 & 7 \end{pmatrix}$, *ն)* $\begin{pmatrix} 5 & 4 & 1 & 3 \\ 2 & 1 & 1 & 4 \\ 3 & 2 & 1 & 1 \\ 1 & 3 & -2 & 2 \end{pmatrix}$,

շ) $\begin{pmatrix} 1 & 2 & 3 & 0 & 0 \\ 2 & 3 & 4 & 0 & 0 \\ 1 & 1 & 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 & 2 \\ 0 & 0 & 0 & 3 & 4 \end{pmatrix}$, *ո)* $\begin{pmatrix} 1 & -1 & -1 & 1 & 0 & 0 \\ -1 & 2 & 4 & 0 & 1 & 5 \\ 2 & -3 & -5 & 1 & 0 & -4 \\ 0 & 1 & 3 & 1 & 1 & 5 \\ 0 & 1 & 3 & 1 & 0 & 4 \\ 1 & 0 & 2 & 2 & 1 & 5 \end{pmatrix}$,

$$
\text{չ)}\ \begin{pmatrix} 0 & 1 & 1 & \dots & 1 & 1 & 1 \\ -1 & 0 & 1 & \dots & 1 & 1 & 1 \\ -1 & -1 & 0 & \dots & 1 & 1 & 1 \\ \dots & \dots & \dots & \dots & \dots & \dots & \dots \\ -1 & -1 & -1 & \dots & -1 & -1 & 0 \end{pmatrix},
$$

$$
\text{պ)}\ \begin{pmatrix} 0 & 1 & 0 & 0 & \dots & 0 & 0 \\ 1 & 0 & 1 & 0 & \dots & 0 & 0 \\ 0 & 1 & 0 & 1 & \dots & 0 & 0 \\ \dots & \dots & \dots & \dots & \dots & \dots & \dots \\ 0 & 0 & 0 & 0 & \dots & 1 & 0 \end{pmatrix}:
$$

164. *Հետևյալ մատրիցների ռանգը հաշվել և՛ եզրող մինորների, և՛ տարրական ձևափոխությունների օգնությամբ.*

$$
\text{ա)}\ \begin{pmatrix} 8 & 2 & 2 & -1 & 1 \\ 1 & 7 & 4 & -2 & 5 \\ 2 & 4 & 2 & -1 & 3 \end{pmatrix},\ \text{բ)}\ \begin{pmatrix} 1 & 7 & 7 & 9 \\ 7 & 5 & 1 & -1 \\ 4 & 2 & -1 & -3 \\ -1 & 1 & 3 & 5 \end{pmatrix},
$$

$$
\text{գ)}\ \begin{pmatrix} -6 & 4 & 8 & -1 & 6 \\ -5 & 2 & 4 & 1 & 3 \\ 7 & 2 & 4 & 1 & 3 \\ 2 & 4 & 8 & -7 & 6 \\ 3 & 2 & 4 & -5 & 3 \end{pmatrix},\ \text{դ)}\ \begin{pmatrix} 77 & 32 & 6 & 5 & 4 \\ 32 & 14 & 3 & 2 & 1 \\ 6 & 3 & 1 & 0 & 0 \\ 5 & 2 & 0 & 1 & 0 \\ 4 & 1 & 0 & 0 & 1 \end{pmatrix},
$$

$$
\text{ե)}\ \begin{pmatrix} 1 & 1 & 1 & 1 \\ 4 & 3 & 2 & 1 \\ 1 & 4 & 1 & 1 \\ 5 & 1 & 1 & 1 \\ 1 & 1 & 3 & 1 \\ 1 & 1 & 1 & 2 \end{pmatrix}:
$$

165. *Հետևյալ մատրիցների ռանգը հաշվել տարրական ձևափոխությունների օգնությամբ.*

ա) $\begin{pmatrix} 47 & -67 & 35 & 201 & 155 \\ 26 & 98 & 23 & -294 & 86 \\ 16 & -428 & 1 & 1284 & 52 \end{pmatrix}$,

բ) $\begin{pmatrix} 24 & 19 & 36 & 72 & -38 \\ 49 & 40 & 73 & 147 & -80 \\ 73 & 59 & 98 & 219 & -118 \\ 47 & 36 & 71 & 141 & -72 \end{pmatrix}$,

գ) $\begin{pmatrix} 17 & -28 & 45 & 11 & 39 \\ 24 & -37 & 61 & 13 & 50 \\ 25 & -7 & 32 & -18 & -11 \\ 31 & 12 & 19 & -43 & -55 \\ 42 & 13 & 29 & -55 & -68 \end{pmatrix}$:

166. *Հաշվել մատրիցի ռանգը պարամետրի բոլոր հնարավոր արժեքների դեպքում.*

ա) $\begin{pmatrix} a & 1 \\ -1 & a \end{pmatrix}$, *բ)* $\begin{pmatrix} 3 & 6 & 9 \\ 4 & 8 & 12 \\ 2 & 7 & a \end{pmatrix}$, *գ)* $\begin{pmatrix} 1 & 1 & 1 \\ 1 & a & a \\ 1 & a^2 & a^2 \end{pmatrix}$,

դ) $\begin{pmatrix} 1 & a & -1 & 2 \\ 2 & -1 & a & 5 \\ 1 & 10 & -6 & 1 \end{pmatrix}$, *ե)* $\begin{pmatrix} 7-a & -12 & 6 \\ 10 & -19-a & 10 \\ 12 & -24 & 13-a \end{pmatrix}$,

զ) $\begin{pmatrix} 3 & 4 & 2 & 2 \\ 3 & 17 & 7 & 1 \\ 1 & 10 & 4 & a \\ 4 & 1 & 1 & 3 \end{pmatrix}$, *է)* $\begin{pmatrix} 1 & 1 & 2 & 3 \\ 1 & 2-a^2 & 2 & 3 \\ 2 & 3 & 1 & 5 \\ 2 & 3 & 1 & 9-a^2 \end{pmatrix}$, ը) $\begin{pmatrix} 1-a & 0 & 0 & 0 \\ 0 & 1-a & 0 & 0 \\ 0 & 0 & 2-a & 3 \\ 0 & 0 & 0 & 3-a \end{pmatrix}$,

թ) $\begin{pmatrix} 1-a & 2 & 3 & ... & n \\ 1 & 2-a & 3 & ... & n \\ ... & ... & ... & ... & ... \\ 1 & 2 & 3 & ... & n-a \end{pmatrix}$,

ժ) $\begin{pmatrix} 1 & 1 & 1 & ... & 1 \\ 1 & a & a^2 & ... & a^{n-1} \\ 1 & a^2 & a^4 & ... & a^{2(n-1)} \\ ... & ... & ... & ... & ... \\ 1 & a^{n-1} & a^{2(n-1)} & ... & a^{(n-1)^2} \end{pmatrix}$:

7 Գծային հավասարումների համակարգեր

167. *Լուծել գծային հավասարումների հետևյալ որոշյալ համակարգերը.*

ա) $\begin{cases} 2x_1 + x_2 = 10 \\ x_1 + x_2 = 17, \end{cases}$ *բ)* $\begin{cases} 3x_1 + 5x_2 = 2 \\ 5x_1 + 9x_2 = 4, \end{cases}$

գ) $\begin{cases} 2x_1 + x_2 - x_3 = 2 \\ 3x_1 + x_2 - 2x_3 = 3 \\ x_1 + x_3 = 3, \end{cases}$

դ) $\begin{cases} x_2 + 3x_3 = -1 \\ 2x_1 + 3x_2 + 5x_3 = 3 \\ 3x_1 + 5x_2 + 7x_3 = 6, \end{cases}$

ե) $\begin{cases} 3x_1 + 4x_2 + 2x_3 + x_4 = 16 \\ x_1 + 7x_2 + x_3 + x_4 = 23 \\ 2x_1 + x_2 + 3x_3 + 5x_4 = 10 \\ 4x_1 - 3x_2 + 4x_3 + 6x_4 = 1, \end{cases}$

զ) $\begin{cases} 2x_1 + 3x_2 + 4x_3 + 5x_4 = 30 \\ 3x_1 + 3x_2 + 4x_3 + 5x_4 = 34 \\ 4x_1 + 4x_2 + 4x_3 + 5x_4 = 41 \\ x_1 + x_2 + x_3 + x_4 = 10, \end{cases}$

է) $\begin{cases} x_1 + x_2 - 6x_3 - 4x_4 = 6 \\ 3x_1 - x_2 - 6x_3 - 4x_4 = 2 \\ 2x_1 + 3x_2 + 9x_3 + 2x_4 = 6 \\ 3x_1 + 2x_2 + 3x_3 + 8x_4 = -7, \end{cases}$

ը) $\begin{cases} x_1 + x_2 + x_3 + x_4 + x_5 = 1 \\ x_1 + x_3 + x_4 + x_5 = -3 \\ x_1 + x_2 + x_3 + x_4 = 0 \\ x_1 + x_2 + x_3 + x_5 = 3 \\ x_1 + x_2 + x_4 + x_5 = -2, \end{cases}$

թ) $\begin{cases} x_1 + x_2 = 3 \\ x_1 + x_3 = 4 \\ x_1 + x_4 = -2 \\ x_1 + x_5 = -1 \\ x_1 + x_6 = 0 \\ x_2 + x_3 + x_4 + x_5 + x_6 = -1 : \end{cases}$

168. *Լուծել համասեռ գծային հավասարումների հետևյալ համակարգերը և նշել լուծումների ֆունդամենտալ համակարգ.*

ա) $\{ x_1 - x_2 + 2x_3 = 0,$

բ) $\{ x_1 + x_2 + x_3 + x_4 + x_5 = 0,$

գ) $\begin{cases} x_1 + 3x_2 + 2x_3 = 0 \\ 2x_1 + 4x_2 + 3x_3 = 0, \end{cases}$

